

ԿԱՅՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Հակակղերական շարժումը կաթոլիկ ժողովրդի մէջ աւելի և աւելի մեծ ծաւալ է ստանում: Զիսօնելով ֆրանսիայի, Սպանիայի և Խտալիայի մասին, ուր կաթոլիկութիւնը մի ժամանակ կատարելապէս տիրապետող էր, այդ շարժումը տարածուել է նաև աղատ Չույցերիայում ու Ամերիկայում: Բագենի մեծ զքառաթեան մէջ տեղի են ունեցել հակակղերական զանազան շարժումներ: Ավենչնայի „N. F. Presse“ թերթում տպուած է մի յայտարարութիւն, որով Փրէյբուրգեան համալսարանի և Կարլսրուէի բարձրագոյն տեխնիքական դպրոցի բոլոր պրոֆեսորները և դասախոսները դիմումն են արել Բագենի մեծ զքսին: Այդ հետաքրքրական յօդուածի մէջ է միջի այլոց կարդում ենք. «40 տարի շարունակ կառավարութիւնը թոյլ չէ տուել Բագենում հիմնուելու կաթոլիկաց վանք: Եթէ այժմ թոյլ տրուի նրանց մեր ելիքում վանք հիմնելու, այն ժամանակ մեր հասարակական կեանքի համար յառաջ կրդայ մի վտանգ, որը մենք չենք կարող ծածկել: Մեր ժողովրդի կրօնական պէտքերի հոգալը ամբողջովին դժոնուում է մեր հոգեութականութեան ձեռքին, որը անկեղծութեամբ նուիրուած է իւր գործին: Դորա հետ ի միասին ժողովրդի բարյական զարգացման գործի համար աշխատում է ինքը հասարակութիւնը և կառավարութիւնը: Դժուար է ասել թէ ինչ օգուտ կարող են տալ կաթոլիկական վանքերը, բայց բոլորի համար որարդ է, որ եզուխտների վերադարձը կարող է միայն խանգարել այն կրօնական անդորրութիւնը, որը այնքան գժուարութեամբ մենք վերականգնել ենք»:

—Մի քանի ամիս առաջ վախճանած կարդինուլ Լեգալովիկու փոխարէն միսիոնարական միաբանութեանց կառավարիչ նշանակուեց Կարդինալ Գօտտին: Նա թէև ծագմամբ հասարակ ընտանիքից է, բայց այժմ համարուում է ապագայ պատական ընտրութեան ամենաազգեցիկ թէկնածուներից մէկը: Կարդինալ Գօտտին սկզբում Զենովյայի նաւահանգստում վարձու բանուոր էր. բայց շուտով կուսակրօնի սքեմ հազնելով մտնում է Կարմիլիաների վանքը: Նա անգարեար ինքնակրթութեամբ պարապելով շաա շուտով աչքի է ընկնում ամբողջ միաբանութեան մէջ և նշանակուում է Զենովյայի ծովային գպրոցի ուսուցչապետ: 1892 թուին Բրազիլիայում կաթոլիկ համայնքի կրօնական գործերում թագաւորում էին խիստ մեծ անկարգութիւններ, այնպէս որ Լեռն ԽIII Պապը կարեոր է համարում բարենորոգումներ մտցնել: այս

ծանր գործը նա յանձնարարում է Գօտաիին, որ ամբողջ երեք տարի մնալով Բրազիլիայում կազմակերպում է կաթոլիկ համայնքի գործը: Այս աշխատանքի համար պապը նրան յետ է կանչում և կարգինալութեան ծիրանի հագցնում, և ապա վերջին օրերս նշանակում է յիշեալ բարձր և խիստ կարեսը պաշտօնին: Քայլ նա մնում է միշտ նոյն համեստ վանականը, ինչ որ առաջ քրանսիական կառավարութեան նկատմամբ՝ Գօտաին Աւատիկանի չափաւոր քաղաքականութեան կողմնակից էր: Նորան նոր պաշտօնի մէջ նշանակուելը մեծ ուրախութեամբ է ընդունուել Հռովմում: ուր Կարգինալ Լեզուիսկուն չէին սիրում:

— Քրանսիայում ներկայումս տեղի է ունենում մի հետաքրքրական շարժում, որի նպատակն է աստուածաբանութեան դաստուութեան մինչև այժմ գոյութիւն ունեցող եղանակը փախել: Այս պահանջը յառաջացել է այն հռովմէական եկեղեցու համար տիրառիթ՝ գէսլքից, որ վերջին տարիները, մեծաւ մասսամբ երիտասարդ և ընդունակ քահանաներից, 400 հոգի խզել են իրանց կապը եկեղեցու հետ: Այս առթիւ Քրանսիայի կը թուած բարձր հոգեորականութիւնը այն միտքն է յայտնում, թէ պէտք է քահանաների դաստիարակութեան դործը հիմնովին կազմակերպել: որպէս զի կարելի լինի հաւասարակշռութիւն պահպանել Հռովմ: կաթոլիկ եկեղեցու աստուածաբանութեան մի կողմից և նորագոյն գիտութեան մէջ միւս կողմից: Այս շարժման գլուխ անցել են այնպիսի յայտնի մարդիկ, ինչպիսիք են Կարգինալ Պերըօն Ալբիացի, արքեպիսկոպ, Մինիօն, Լառւազի, որը ամենից հմուտն է համարուում ո. Գրքի գիտութեանց մէջ, Դիւշէն, Լէ—Կամիու (հեղինակ «Յիսուս Քրիստոս կեանքը» յայտնի գրուածքի): Այս անձինք համոզուած են: թէ Քրանսիայում կաթոլիկ եկեղեցու թոյլ կողմն այն է, որ քաֆանումն է ընկել աստուածաբանութեան և նորագոյն աշխարհահայեցողութեան, քաղաքակրթութեան և ուսումնական հետազոտութեանց մէջ, ուստի և եկեղեցին կորցրել է իւր նշանակութիւնը, չէ կարողանում ազդել զարգացած ու ուսումնական գասի վերայ: Սոքա գժգոհութիւն են յայտնում, որ քահանայացուները հոգեոր գպրանցներում դաստիարակուում են հին սքոլաստիքական եղանակով և չեն այցելում համալսարանները, ուր սովորեցնում են խեկական գիտութիւններն ու գործ գնում քննադատութիւն: Քրանսիայի հոգեոր գպրոցների այդ գրութիւնը քննութեան ենթարկելով, նոքա ողբում են իրանց եկեղեցու տիրուը ու անմիշիթար վիճակը և միջոցներ են առաջարկում բարեփոխելու ու ժամանակակից քաղաքակրթութեան համակերպելու: Աբբայ

Ալէյնը, այս շարժման մի նշանաւոր անդամը, քահանաների դառտիարակութեան համար կազմած իւր նոր ծրագրի մէջ այն տիտուր և միանդամայն ցաւալի ճշմարտութիւնն է յայտնում, թէ հոգեսր դպրանոցներում ուսուցիչ են նշանակում ոչ թէ ուսումնական, ընդունակ մարդկանց, այլ նրանց, որոնք պաշտպանում են ընդունուած հին սքոլաստիբական եղանակները, թէ ուսումնական տեսակետից նոքա լինեն խիստ տգէտ։ Դիւշէն իւր «Փրանս» եկեղեցու հին պատմութիւնը՝ գրքում ոչնչացնում է անդրլեռնականների շատ կեղծիքները, իսկ Լաուազէն ձգտում է Աստուածաշնչի ուսումնասիրութիւնը բարձրացնել այն աստիճանի, որ առաջ եղել է, երբ Ռիշար Սիմոնի պէս յայտնի անձնքի համաշխարհային դիտութեան գլուխ էին կանդնած։ Սոցա բոլոր գաղափարները հրատարակուած են «Փրանսիական հոգեուրականութեան թերթում»։ Արքեպ. Մինիօն հրատարակել է «Աստուածաբանութեան գասատուութեան եղանակի մասին» մի նշանաւոր յօդուած, ուր նա պնդում է թէ կաթոլիկ աստուածաբանական գետութիւնը պէտք է համաձայնեցնել նորադոյն դիտութեան հետո Պաքզ է, որ այսպիսի ազատամիտ ձգտումները հակառակ շարժում առաջ կըքերեն սքոլաստիբական եղութական շըջաններում նանակ եպիսկ. անդրլեռնական Տիւրինադը հարցնում է ազատամիտ դսլրոցի այս գաղափարների առթիւ. «Ո՞ւր ենք գիմում մենք, աւելի և աւելի խորն են թափանցում մեր մէջ այս նոր գաղափարները»։ —Եկեղեցու պաշտօնական ներկայացուցիչները նմանապէս հակառակում են ազատամիտ շարժման, իսկ պաշտապանները հեռացուում են բարձր պաշտօններից։ Նոր դպրոցի գաղափարները կարելի է աւելի լաւ արտայայտել հ. Մինիօն հետեւալ խօսքերով։ «Աստուածաբանութիւնը գեռ չի կատարել իւր գերը Աստուածոյ թագաւորութիւնը տարածելու գործում, որը դաւանաբանութեան անփոփոխ առարկան է։ Նա պարտաւոր է ցոյց տալ, թէ ինքն ի՞նչպէս պէտք է համապատասխանէ ժամանակի ոգուն, կամ ի՞նչպէս պէտք է համաձայնեցնէ հաւատի ուժմունք աշխարհուղ գաղափարների հետ։ Այս նպատակին հանելու համար աստուածաբանութիւնը պէտք է հիմնաւոր ծանօթութիւն ունենայ ժամանակից ուղղութիւնների մասին և պէտք է թափանցէ հաւատի ուսման իսկական կենտրոնը»։

